ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1959 Общественные науки

Հ. Գ. Ասլանյան

ԼԵՆԻՆՅԱՆ ՀԱՆՃԱՐԻ ՎՍԵՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Լրացավ Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» անմահ աշխատության լույս ընծայման հիսուն տարին։ Հինգ տասնամյակ զինել է և շարունակում է զինել այդ գիրքը կոմունիստական ու բանվորական պարտիաներին, առաջավոր հասարակական ու գիտական գործիչներին մարքս-լենինյան ամենահագթ գաղափարներով, ամենաառաջավոր դիալեկտիկա-մատերիալիստական աշխարհայացքով։ Իր բովանդակության անհատակ խորությամբ, սկզբունքների փաստական ու գիտական հիմնավորությամբ, ճշմարտացիությամբ ու մոբիլիզացնող ուժով «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմը» կարող է դրվել միայն «Կապիտալի» և «Անտի-Դյուրինգի» կողքին։ Այդ մոնումենտալ գործերից յուրաքանչյուրը, երևան գալով որպես բանվորական շարժման քաղաքական ու իդեոլոգիական մեծագույն խնդիրների լուծման անհրաժեշտության հետևանք, մի ամբողջ դարագլուխ է բաց արել մարքսիզմի պատմության մեջ։ «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմը» մարքսիստական փիլիսոփայության լենինյան էտապի ամենավսեմ կոթողն է, և որքան ավելի հեռվից ենք դիտում, այնքան ավելի վառ ու ցայտուն է երևում նրա գաղափարների բարձրությունն ու վեհությունը։

* * *

Պատմական ի՞նչ անհրաժեշտության ծնունդ էր այդ աշխատությունը, ի՞նչ խնդիրներ էին դրված Լենինի ու բոլշևիկյան պարտիայի առաջ, ի՞նչ գաղափարական-քաղաքական պրոբլեմներ պետք է լուծվեին։ Պատասխանելով այս հարցերին, մենք դրանով իսկ իմաստավորած կլինենք «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմի» թեորիական-գաղափարական բովանդակությունն ու անգնահատելի նշանակությունը։

Ռուսաստանի պատմության XX դարի առաջին տասնամյակը հասարակական-քաղաքական տեսակետից երեք որոշակի էտապներ է ներկայացնում. ռուսական առաջին ռևոլյուցիայի նախապատրաստում, բուն ռևոլյուցիայի ընթացքը (սկիզբը, վերելքը, վայրէջքը), ռեակցիայի ժամանակաշրջանը։ Համաշխարհային պատմության մասշտաբների տեսակետից անչափ կարճատև այս ժամանակաշրջանը սոցիալ-դասակարգային պայքարի բացահայտ դրսևորման, այդ պայքարի ձևերի ու մեթոդների բազմազանության, քաղաքական, ռևոլյուցիոն փորձի հարստության տեսակետից հավասար է շատ տասնամյակների։ Ռևոլյուցիայի նախապատրաստման և բուն ռևոլյուցիայի մեծ դեպքերի ընթացքում ռուսական պրոլետարիատը դրսևորեց իրեն որպես համաշխարհային պրոլետարիատի ավանգարդ, ցույց տվեց, որ ինքը կարող է և պետք է լուծի Ռուսաստանի սոցիալական վերափոխումների հասունացած խնդիրները։

Ռևոլյուցիան ժամանակավոր պարտություն կրեց. վրա հասան սևհար-

լուսյակային-կադետական ռեակցիայի մռայլ տարիները. կոնտրռևոլյուցիան հակահարձակման անցավ պրոլետարիատի, բոլշևիկների պարտիայի, գյուղացիության դեմ բոլոր ուղղություններով՝ տնտեսական, քաղաքական, իդեոլոգիական։ Փոխվեց քաղաքական ուժերի հարաբերակցությունը։ Այդ իրադրության մեջ անչափ անհրաժեշտ էր թեորիապես վեր հանել, վերլուծել, ընդհանրացնել պատմության նոր փորձը, ցույց տալ, թե ինչ կատարվեց, ինչ պրոցես տեղի ունեցավ, որն է պատմության դիալեկտիկան. պետք էր մշակել բանվոր դասակարգի, պարտիայի քաղաքականության նոր խնդիրները, տակտիկայի նոր ձևերը։ Այսպիսով մարքսիստական թեորիայի և ամենից առաջ փիլիսոփայության հիմքերի նոր մշակումն ու զարգացումը առաջնահերթ խնդիր դարձավ։ Պատմական այդ մեծ խնդիրը լուծեց Վ. Ի. Լենինը իր «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» և այլ աշխատություններում իրեն հատուկ ուժով, հիմնավորությամբ, բոլշևիկյան պարտիականության կրքով։ Բացատրելով այդ խնդրի լուծման անհրաժեշտությունը, Լենինն ընդգծում էր, որ մարքսիզմը մեկընդմիշտ տրված ավարտուն դոգմա չէ. նա հասարակական-քաղաքական-գաղափարական հոսանք է, որի արմատական փիլիսոփայական հիմքը մատերիալիստական դիալեկտիկան է. այն սերտորեն կապված է բանվորական շարժման անմիջական պրակտիկ խնդիրների հետ։ Մարքսիզմը ստեղծագործաբար զարգացող ուսմունք է, ուստի և նա չի կարող չարտացոլել պատմության նոր շրջադարձերը, սոցիալ-քաղաքական սուր բեկումները, ռևոլյուցիոն գործունեության նոր պայմաններն ու խնդիրները։

«Մարքսիզմի թեորիան»,—գրում էր Լենինը,—մեր ամբողջ աշխարհայացքի, մեր ամբողջ պարտիական ծրագրի ու տակտիկայի «սկզբունքային հիմունքները» ոչ թե պատահականորեն, այլ անխուսափելիորեն այժմ դրավել են առաջին տեղերից մեկը պարտիայի ամբողջ կյանքում։ Պատահական չէր, այլ անխուսափելի էր այն, որ ռևոլյուցիայի ձախողումից հետո հասարակության բոլոր դասակարգերում, ամենալայն ժողովրդական մասսաների մեջ արթնացավ հետաքրքրություն դեպի ամբողջ աշխարհայացքի խոր հիմունքները՝ ընդհուպ մինչև կրոնի ու փիլիսոփայության հարցերը, ընդհուպ մինչև մեր մարքսիստական ուսմունքի սկզբունքները՝ ամբողջությամբ վերցրած։ Ռևոլյուցիայի միջոցով տակտիկայի հարցերի շուրջը սուր պայքարի մեջ ներքաշված մասսաները բացահայտ ելույթների բացակայության ժամանակաշրջանում ոչ թե պատահականորեն, այլ անխուսափելիորեն առաջադրեցին ընդհանուր թեորիական գիտելիքների պահանջ։ Մարքսիզմի հիմունքները պետք է նորից պարզաբանել այդ մասսաներին, մարքսիզմի թեորիայի պաշտպանությունը վերստին հերթի է դրվում» (Վ. Ի. Լենին, Գործերի դրության մասին պարտիայի մեջ հոդվածը, հատ. 17, էջ 23)։

Այսպիսով, թեորիական, փիլիսոփայական հարցերը առաջին պլանի վրա քաշվեցին ոչ թե առանձին գործիչների կամայականության հետևանքով, ոչ թե պատահականորեն, այլ անհրաժեշտաբար, պատմական կոնկրետ հանգամանքների թելադրանքով։ Ռևոլյուցիոն և դրան հաջորդող ռեակցիոն տարիները դրեցին հարցեր, որոնք խորը փիլիսոփայական իմաստ ու նշանակություն ունեին։ Լենինն ամենից սուր և ամենից խորը գիտակցեց պարտիայի գործունեության նոր խնդիրների լուծման անհրաժեշտությունն ու վճռականորեն ձեռնարկեց դրանց լուծմանը։ Լենինն ամբողջ ուժով ընդգծում էր մարքսիզմի ստեղծագործական բնույթը, նրա հետագա զարգացման ան-

հրաժեշտությունը։ «Հենց այն պատճառով,—գրում էր նա մի այլ հոդվածում,—որ մարքսիզմը մեռած դոգմա չէ, մի ինչ-որ ավարտուն, պատրաստի, անփոփոխ ուսմունք չէ, այլ գործողության կենդանի ուղեցույց, հենց այդ պատճառով նա չէր կարող իր վրա շարտացոլել հասարակական կյանքի պայմանների զարմանալի սուր փոփոխումը» (նույն տեղում, էջ 32—33)։ «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմը» հանդիսացավ ստեղծագործական մարքսիզմի հանճարեղ մարմնացումը։

Ռուսաստանի հասարակական զարգացման խոշորագույն իրադարձությունների փիլիսոփայական ընդհանրացումն ու իմաստավորումը, հարուստ փորձի յուրացումը Լենինի, Կոմունիստական պարտիայի առաջ դրված մեծագույն քաղաքական-գաղափարական խնդրի մի կողմն էր միայն. մյուս կողմը ռեակցիոն իդեոլոգիային հակահարված տալու անհրաժեշտությունն էր։ Բուրժուական ու մանրբուրժուական ինտելիգենցիան համակվեց կրոնա-միստիկական, կոնտրռևոլյուցիոն տրամադրություններով. ինչպես անձրևից հետո սունկերը, հրապարակ եկան իդեալիստական, միստիկական փիլիսոփայության բազմաղան հոսանքներ, դպրոցներ ու դպրոցիկներ։ Այդ բոլորի խստացրած արտահայտությունը էմպիրիոկրիտիցիզմն էր, մախիզմը՝ բերկլիականության և յոսմիզմի հին գաղափարների նոր վարիանտը։ Բուրժուական այդ իդեոլոգիայի ազդեցությունը թափանցեց նաև սոցիալ-դեմոկրատիայի շարքերը, վարակելով նրա անկայուն տարրերին, ժամանակավոր ուղեկիցներին։ Սկսվեց մարքսիզմի մախիստական ռևիզիան։ Ռուս մախիստների մի ամբողջ խումբ (Բոգդանով, Բազարով, Յուշկևիչ, Վալենտինով, Չեռնով և ուրիշներ) թութակի պես կրկնելով իրենց արևմտյան ուսուցիչների դրույթները, մարքսիզմը «նորոգելու», գիտության նոր նվաճումներով «հարստացնելու» քողի տակ սկսեցին նենգափոխել դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի հիմնական դրույթները, հարմարեցնելով ռեակցիոն իրադրությանը։ Անհրաժեշտ էր բոլոր ուղղություններով հիմնավոր ճակատամարտ տալ ռևոլյուցիոն մարքսիզմի, բոլշևիզմի բոլոր թշնամիներին ու հակառակորդներին, պաշտպանել մարքսիստական աշխարհայացքի անաղարտությունը բազմաթիվ թշնամիներից, մերկացնել նրանց ռեակցիոն էությունը։ Պատմական այս խնդիրն ևս լուծեց Լենինը իր «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությամբ։

Լենինը անառարկելի ուժով ապացուցեց մախիզմի և իդեալիստական այլ դպրոցների ռեակցիոն էությունը, սխալականությունն ու վտանգավորությունը։ Միջնադարյան իմավարամոլները կրկին նախաբեմ հանդես եկան և սկսեցին վհատություն, հուսահատություն, միստիկա սերմանել շորս կողմը, քարոզել պռոնոգրաֆիա, ծայրահեղ անհատապաշտություն, փախուստ ռևոլյուցիոն շարժումից։ Ահա թե ում էր ծառայում մախիզմը։ Մախիզմը հոգևոր փայտ հանդիսացավ ցարիզմի, կադետական բուրժուազիայի, ժողովրդի բոլոր թշնամիների ձեռքին։ Ժխտելով մատերիայի և նրա օրինաչափությունների օբյեկտիվ գոյությունն ու ճանաչելիությունը, էմպիրիոկրիտիկները փիլիսոփայորեն «հիմնավորում» էին կրոնն ու հավատը, կոնտրռևոլյուցիայի հոգևոր փայտը։ «Ոչ թե պատահաբար, այլ անհրաժեշտության ուժով մեր ամբողջ ռեակցիան ընդհանրապես, լիբերալ (վեխական, կադետական) ռեակցիան մասնավորապես, «նեսվեցին» դեպի կրոն։ Միայն գավազանը, միայն մտրակը քիչ է. գավազանը համենայն դեպս կիսակոտրված է։ Վեխականները առաջավոր բուրժուազիային օգնում են ձեռք բերելու նորագույն դաղափարական գավազան, հոգե-

վոր գավազան։ Մախիզմը, իրրև իդեալիզմի այլատեսակություն, օբյեկտիվորեն հանգիսանում է ռեակցիայի գործիք, ռեակցիայի իրագործիչ» (Վ. Ի. Լենին, հատ. 17, էջ 73)։ Պատահական չէ, որ ռուսական մախիզմի փիլիսոփայական պլատֆորմայի վրա համախմբվել էին քաղաքական տարբեր խմբավորումների պատկանող մարդիկ նրանց համախմբում էր ընդհանուր թշնամանքը լենինիզմի, լենինյան պարտիայի դեմ։ Պատահական չէր մախիզմի կապը լիկվիդատորության հետ. մեկը ձգտում էր լիկվիդացնել բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պարտիան, մյուսը այդ պարտիայի թեորետիկական հիմունքները՝ շարքային սոցիալ-դեմոկրատներին շփոթեցնելու, ռևոլյուցիոն շարժումից նրանց հետ պահելու նպատակով։ Այսպիսով փիլիսոփայական ու քաղաքական լիկվիդատորությունը ներկայացնում էր հակապարտիական միևնույն մեդալի երկու կողմերը։ Լենինը խորապես բացատրում էր, որ պայքարը մախիզմի դեմ փիլիսոփայական կատեգորիաների ու պրոբլեմների շուրջը վերացական մտքերի պայքար չէ, այլ պարտիական, քաղաքական պայքար է։ Մախիստական և այլ տեսակի ռևիզիոնիզմի դեմ վճռական պայքարը անհրաժեշտ ու անխուսափելի է, դա մարքսիստների կենսական պարտիական գործն է։ Միայն այդ ձևով կարելի է ամրապնդել սոցիալ-դեմոկրատների շարքերը, տալ առաջավոր պրոլետարներին հաստատ համոզմունք և հավատ իրենց ուժերի նկատմամբ, դաստիարակել նրանց դայիր ռևոլյուցիոն մարտերի համար։ Այսպես էր հարցը դրվում։

Բացատրելով, որ ունայնության, վճռության, իդեալիստական տրամադրությունների ազդեցության թափանցումը սոցիալ-դեմոկրատների շարքերը որոշ չափով կրիզիս է ստեղծել մարքսիզմի համար, Լենինը մարտական խնդիր էր առաջադրում. «Ավելի կարևոր բան չկա, քան կրիզիսի խորությունը և նրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը գիտակցած բոլոր մարքսիստների համախմբումը՝ պաշտպանելու համար մարքսիզմի թեորիական հիմքերը և նրա արմատական դրույթները, որոնք խեղաթյուրվում են ամենահակադիր կողմերից՝ բուրժուական ազդեցությունը մարքսիզմի զանազան «ուղեկիցների» վրա տարածելու ճանապարհով» (նույն տեղում, էջ 34)։

Նախորդ երկու հանգամանքները, այսինքն ռուսական առաջին ռևոլյուցիայի հարուստ դասերի փիլիսոփայական անալիզը և նորագույն իդեալիստական հոսանքների մարքսիստական քննադատությունը արդեն ինքնին համաշխարհային նշանակություն ունեին։ Կար նաև մի երրորդ հանգամանք, որն է՛լ ավելի էր ընդգծում լենինյան աշխատության միջազգային նշանակությունը և մեծագույն գիտական խնդիր էր դնում նրա առաջ։ Խոսքը ֆիզիկայի մեջ տեղի ունեցող նոր երևույթների մասին է։ «Այդ փիլիսոփայական «վերլուծություն»,— գրում էր Լենինը,—վաղուց նախապատրաստվում էր նաև աշխարհիս մյուս երկրներում այնչափով, որչափով, օրինակ, նոր ֆիզիկան դրել է մի շարք նոր հարցեր, որոնց հետ պետք է «հաշվի նստեր» դիալեկտիկական մատերիալիզմը» (Վ. Ի. Լենին, հատ. 17, էջ 72—73)։

Խնդիրն այն է, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին բնագիտությունը կատարյալ ռևոլյուցիա էր ապրում. որը գնալով խորանում էր. այդ ռևոլյուցիան մինչև օրս էլ շարունակվում է։ Գիտությունը թափանցում էր միկրոաշխարհը, բացահայտելով նյութի նոր տեսակներ ու մինչև այդ անհայտ հատկություններ, նյութի շարժման նոր ձևեր ու փոխակերպություններ, այնպիսի օրինաչափություններ, որոնք չէին տեղավորվում մեխանիստական ֆի-

զիկայի հին սխեմաներում։ Բուրժուական միտքը անզոր գտնվեց ըմբռնելու բնագիտության մեջ կատարվող այդ պրոցեսները, գլխակորույս եղավ, փակուղու մեջ ընկավ։ Դա ֆիզիկայի ճգնաժամն էր։ Այդ ճգնաժամի առանձնահատկություններից մեկն այն էր, որ ֆիզիկոսների մի խումբ, չկողմնորոշվելով գիտության զարգացման բարդ պրոցեսների մեջ, գլորվեց դեպի իդեալիզմ, իսկ ռեակցիոն փիլիսոփա իդեալիստները, մախիստները ձուկ որսալով պղտոր ջրում, խորացնում էին այդ ճգնաժամը։ Բուրժուական մտքի այդ տարրնթացությունը պատահական երևույթ չէր, այլ իմպերիալիզմի ռեակցիոն իդեոլոգիայի արտահայտություններից մեկը։

Վ. Ի. Լենինը ուշի-ուշով հետևում էր այդ պրոցեսներին։ Նա բացատրում էր, որ քննարկել դիալեկտիկական մատերիալիզմի դրույթները, շրջանցելով բնագիտության նյութը, նշանակում է ծաղրի ենթարկել այդ փիլիսոփայության բուն ոգին ու էությունը։ Այլ կերպ չի կարող լինել. դիալեկտիկական մատերիալիզմը կապված է բնագիտության հետ ոչ թե պատահականորեն, այլ իր էությամբ, իր ծագումով, իր ռեալ բովանդակությամբ, իր ոգով։ Կապված է երկուստեք. նա ինքը բնագիտական հսկայական նյութի ընդհանրացման արդյունք է, մարդկային իմացության ամբողջ պատմության ամփոփ հանրագումարը։ Մյուս կողմից, դիալեկտիկական մատերիալիզմը իմացության միակ ճիշտ մեթոդն է, որը կիրառվելով գիտության տարբեր բնագավառներում, հասցնում է բեղմնավոր արդյունքների։ Անհրաժեշտ էր մարքսիստորեն ընդհանրացնել նորագույն բնագիտության ընձեռած նյութը, նոր հայտնագործությունների վերլուծմամբ ցույց տալ դրանց մախիստական, իդեալիստական ֆալսիֆիկացիան, բարձրացնել դիալեկտիկական մատերիալիզմը նոր աստիճանի։ «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմում» վիթխարի ուժով լուծված է նաև այս խնդիրը։ Լենինը տիտանական աշխատանք կատարեց. նա հիմնավորապես տնտղեց ֆիզիկայի, քիմիայի և այլ գիտությունների բնագավառում XIX դարի 90-ական թվականներից մինչև 1909 թվականը լույս տեսած հսկայական գրականությունը Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Ռուսաստանում, Իտալիայում, հետևելով մատերիալիստական և իդեալիստական գծերի պայքարի դրսևորմանը այդ երկրներում, սուր քննադատության ենթարկելով այն գնոսեոլոգիական եզրակացությունները, որ իդեալիստ ֆիզիկոսները հանում էին ֆիզիկայի նոր հայտնագործություններից։ Այդ գիծը Լենինը անշեղորեն շարունակում էր հետագայում էլ. այդ մասին են վկայում «Փիլիսոփայական տետրերը» (Երկերի 38-րդ հատորը), «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» ծրագրային հոդվածը (1922) և այլ աշխատություններ։

* * *

«Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմի» լույս ընծայման պատմական պայմանները, ռուսական պրոլետարիատի և նրա պարտիայի առաջ դրված քաղաքական ու գաղափարական հրատապ խնդիրները որոշեցին նաև մարքսիստական-լենինյան փիլիսոփայության այդ կլասիկ գործի բովանդակությունն ու նշանակությունը։ Անհնար է մի թռուցիկ ակնարկում վերարտադրել այդ բովանդակությունը. այդ մասամբ արվում է «Տեղեկագրի» այս համարի հաջորդ հոդվածներում։ Մենք կսահմանափակվենք միայն ընդհանուր և համառոտ բնութագրությամբ։

Վ. Ի. Լենինի աշխատության մեջ մշակված ու վերլուծված են փիլիսոփա-

յության, բնագիտության և հասարակական գիտության մեծագույն հարցերը։ Այդ բոլոր բնագավառներում լենինյան հանճարը շողշողում է ծիածանի բոլոր գույներով. փաստական նյութի հարստությունը, այդ նյութի տրամաբանական ու պատմական անալիզի խորությունն ու ընդհանրացումների անընդգրկելի լայն հորիզոնը, փաստարկման կուռ ու ստեղծագործական բնույթը, ստույգ գիտականության և հետևողական պրոլետարական պարտիականության զարմանալի համակցումը, արծարծված դաղափարների մոբիլիզացնող ուժը—այսպես կարելի է բնութագրել «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմը»։

Նորագույն իդեալիզմի քննադատությունը և մարքսիստական իմացաբանության բազմակողմանի մշակումն ու զարդացումը Լենինի ստեղծագործության հիմնական պրոբլեմն է։ Լենինն ամբողջ ուժով ցույց տվեց, որ մախիզմը փքուն ֆրազներով («սկզբունքային կոորդինացիա»), «աշխարհի տարրեր», «ինտրոեկցիա» և այլն) պարուրված XVIII դարի սուբյեկտիվ իդեալիզմի և ագնոստիցիզմի (Բերկլի, Յում, Կանտ) կրկներդն է, իդեալիզմ, որը վաղուց հերքվել է մատերիալիստների ու հատկապես մարքսիստների կողմից ու գիտության զարդացման ամբողջ ընթացքով։

Քննության առնելով զդայությունների ու նյութի հարաբերության փիլիսոփայական հիմնական հարցը, Լենինը վճռական ճակատամարտ տվեց նորագույն իդեալիզմի բազմազան դպրոցներին՝ պոզիտիվիզմ, էմպիրիոկրիտիցիզմ, նեոկանտականություն, իմանենտականություն, պրագմատիզմ։ Մոտիկից տնտղելով, մենք տեսնում ենք, որ այդ բազմապիսի «իզմ»-երը նույն ռեակցիոն, հակագիտական էության տարբեր ձևակերպումներն են։ Այս միտքն անցնում է ամբողջ գրքով։ Աշխարհը տարրալուծելով զդայությունների կոմպլեքսների, «ես»-ի մեջ, սուբյեկտիվ իդեալիզմը վերջին հաշվով հանգում է միստիկայի, գիտությունը նենգափոխելով ֆիդեիզմի։ Նույն հանգրվանին է գալիս նաև օբյեկտիվ իդեալիզմը, միայն ավելի անմիջականորեն։

Դրան հակառակ Լենինը բնագիտությանը, պատմությանը, մարդկային պրակտիկային լիովին համապատասխան՝ ցույց է տալիս, որ զդայությունը (և գիտակցությունն ամբողջությամբ) մատերիայի երկարատև զարդացման արդյունքն է, ուղեղի բարձրագույն հատկությունը, օբյեկտիվ աշխարհի արտացոլումը։ Եվ այժմ, հիսուն տարի անց, բնագիտությունը, գիտական ֆիզիոլոգիայի նվաճումները փայլուն կերպով հաստատում են զդայությունների այն սահմանումների ճշտությունը, որ տրված են Լենինի աշխատության մեջ և որոնցում բացահայտված են զդայությունների էությունն ու առանձնահատկությունները։ Այդ սահմանումների մեթոդոլոգիական նշանակությունը հսկայական է, ինչպես իդեալիզմի, այնպես էլ վուլգար մատերիալիզմի դեմ պայքարելու գործում։ Արտացոլման մարքս-լենինյան թեորիան, որը հսկայական բարձրության է հասցված Լենինի գրքում, մարդկային մտքի մեծագույն նվաճումն է։ Նոր փաստարկներով քննադատության ենթարկելով ագնոստիցիզմը և զարդացնելով ինդելսի համապատասխան դրույթները, Լենինն անգերազանց հրստակությամբ ու խորությամբ ձևակերպում է մարքսիստական իմացաբանության հիմնական դրույթները, բացահայտելով արտացոլման պրոցեսի բարդ, հակասական, դիալեկտիկ բնույթը, ճշմարտության պրոցեսի խորը դիալեկտիկան։

Վերարտադրենք այդ դրույթները։

1. Մեզնից դուրս, մեր գիտակցությունից անկախ գոյություն ունեն օբյեկ-

տիվ իրեր իրենց հատկություններով, հարաբերություններով, գործողություններով։

2. Ոչ մի սկզբունքային տարբերություն, անդունդ չկա ինքնին իրի և երևույթի միջև, ինչպես հորինում են ագնոստիկները. սկզբունքորեն ամեն ինչ ճանաչելի է։ Կան արդեն ճանաչված իրեր և դեռ չճանաչված իրեր, որոնք կճանաչվեն։ Անճանաչելի ոչինչ չկա.

3. «Իմացության մեջ, ինչպես և գիտության բոլոր մյուս բնագավառներում, անհրաժեշտ է դիալեկտիկորեն դատել, այսինքն՝ մեր իմացությունը չենթադրել պատրաստ ու անփոփոխ, այլ քննել, թե ինչ կերպ է չգիտությունից երևան գալիս գիտությունը, ինչ կերպ է ոչ-լիակատար, անճշգրիտ գիտությունը դառնում ավելի լիակատար և ավելի ճշգրիտ» (Վ. Ի. Լենին, հատ. 14, էջ 123—124)։ Այս նշանակում է, որ մեր իմացությունը ավելի ու ավելի խորն արտացոլելով օբյեկտիվ աշխարհը, նրա հատկությունները, գործողություններն ու օրինաչափ կապերը, տալիս է մեզ օբյեկտիվ ճշմարտություն, հարաբերական ճշմարտությունից գնում է դեպի բացարձակ ճշմարտությունը, այստեղից դեպի մի ուրիշ, ավելի խորը բացարձակ ճշմարտությունը և այսպես անվերջ։ Ընդ որում իմացության պրոցեսի հիմքն ու ճշմարտության չափանիշը մարդկային պրակտիկան է։

Այս հիմնապրոյեքտներից յուրաքանչյուրը բազմակողմանի, վառ ու անգերազանց լուսաբանություն է գտել Լենինի աշխատության մեջ։ Քանի որ մեզնից դուրս, մեր զգայություններից, գիտակցությունից անկախ գոյություն ունի օբյեկտիվ աշխարհ, ինչպես հաստատում են բազմադարյան գիտությունն ու մարդկային պրակտիկան, ապա պետք էր տալ այդ օբյեկտիվ աշխարհի բնության փիլիսոփայական սահմանումը, որ և արված է Լենինի կողմից։ Օբյեկտիվ աշխարհի հիմքն ու բովանդակությունը՝ մատերիան է։ Մատերիան, ասում է Լենինը, մեր զգայություններում տրված օբյեկտիվ ռեալությունն է. կամ մատերիան մեր գիտակցությունից դուրս և անկախ գոյություն ունեցող օբյեկտիվ ռեալությունն է, որն արտացոլվում, արտապատկերվում, պատճենավորվում, լուսանկարվում է մեր գիտակցության կողմից։ Այստեղ երկու ֆունդամենտալ հատկանիշ է նշված. այն, որ մատերիան օբյեկտիվ ռեալությունն է. գոյություն ունի մեր գիտակցությունից դուրս ու անկախ և այն, որ մատերիան մեր գիտակցության միակ աղբյուրն է ու ճանաչվում է նրա կողմից։ Այս հռչակավոր սահմանումը հանդիսանալով բնագիտության ու մատերիալիստական փիլիսոփայության երկարատև պատմության ու մարդու դարավոր պրակտիկ փորձի հանրագումարն ու ընդհանրացումը, մատերիայի առավել խորը և առավել լիակատար սահմանումն է. այն մտել է ոչ միայն մարքսիստների, այլև բոլոր առաջադեմ մտածողների գիտակցության մեջ և ստացել աքսիոմայի ուժ։ Տալով այդ սահմանումը, Լենինը խորը սկզբունքային բացատրություն է տալիս այն մասին, որ մատերիայի փիլիսոփայական սահմանումը պետք է տարբերվի նյութի կոնկրետ ձևերի, կառուցվածքի և հատկությունների բնագիտական պատկերացումից. վերջինս կարող է հնանալ և հնանում է խոշոր հայտնագործությունների հետևանքով, իսկ փիլիսոփայական սահմանումը ավելի լայն է, խորը և չի կարող հնանալ, այն կարող է միայն հարստանալ։

Բացահայտելով մատերիա հասկացության բովանդակությունը. Լենինը խորը վերլուծության է ենթարկում մատերիայի գոյության հիմնական ձևերը՝ տարածությունը, ժամանակը, շարժումը, հատուկ քննության է առնում պատ-

Տառականության, օրինաչափության ու այլ կատեգորիաներ, ընդգծում է աշխարհի հավիտենականությունն ու անվերջությունը ժամանակի ու տարածության մեջ, դուգահեռաբար խորտակելով բոլոր իդեալիստական ու ֆիդեիստական կառուցումները։ Դիալեկտիկական մատերիալիզմի իմացաբանության ու ֆունդամենտալ կատեգորիաների լենինյան վերլուծությունը հսկայական նշանակություն ունի ոչ միայն մարքս-լենինյան փիլիսոփայության ու առաջավոր գիտության հետագա զարգացման համար. այն հատու զենք է արդի ռեակցիոն, հակագիտական կոնցեպցիաները հողմացրիվ անելու համար։

Վերն արդեն խոսվեց բնագիտության նորագույն հեղաշրջման և ֆիզիկայի ճգնաժամի մասին։ Այդ հեղաշրջումը պահանջում էր նոր ձևով դնել փիլիսոփայության արմատական հարցերը, փիլիսոփայության և բնագիտության հարաբերակցության պրոբլեմները։ Լուծելով այդ խնդիրները, Լենինը նոր դարագլուխ բաց արեց բնագիտության փիլիսոփայության մարքսիստական ըմբռնման պատմության մեջ։

Դիալեկտիկական մատերիալիզմի և առաջավոր բնագիտության անսպառ աղբյուր է բնագիտության իմացաբանական հարցերի լենինյան անալիզը։ Այստեղ բնութագրված է բնագիտության հեղաշրջման փաստական կողմը, բացատրված է ֆիզիկայի ճգնաժամի էությունը, վեր են հանված այդ ճգնաժամի (սոցիալական և իմացաբանական) պատճառները, նշված են դրանից դուրս գալու ուղիները։ Լենինը քարը քարի վրա չթողեց իդեալիստ ֆիզիկոսների և փիլիսոփաների այն հիմնական դրույթից, թե «մատերիան չքացավ», ապացուցելով, որ ժամանակակից բնագիտությունը միայն և միայն հաստատում է դիալեկտիկական մատերիալիզմի դրույթների ճշտությունը, որ բնագիտությունը կ՝այտնաբերի միկրոաշխարհի նորանոր մասնիկներ, յուրօրինակ օրինաչափություններ։ Մատերիան անվերջ և անսպառ է։ Բնագիտության հետագա ընթացքը ամբողջովին և բոլոր ճյուղերով փայլուն կերպով հաստատեց լենինյան մտքի անսահման խորաթափանցությունը։ Վվանտային ֆիզիկան, հարաբերականության թեորիան, մասսայի և էներգիայի նորագույն հետազոտությունները, կոսմոգոնիայի, աստրոֆիզիկայի, քիմիայի, բիոլոգիայի և ֆիզիոլոգիայի արդի նվաճումները նոր տվյալներով հաստատում են դիալեկտիկական մատերիալիզմի դրույթների ուժն ու օբյեկտիվ ճշմարտացիությունը։

Բայց հենց այդ պատճառով էլ խավարամոլները, ռեակցիոն մտածողները չեն կարող բացահայտորեն ժխտել գիտության ճշմարտացիությունը, այլ արտաքնապես ընդունելով նրա նվաճումները, ճգնում են հարմարեցնել ֆիդեիզմին, հաշտեցնել գիտությունը կրոնի հետ։

Լենինն իր ժամանակին նկատել է այդ, երբ գրել է. «Արդի ֆիդեիզմն ամենևին չի մերժում գիտությունը. նա միայն մերժում է գիտության «չափազանց հավակնությունները», այն է՝ օբյեկտիվ ճշմարտության հավակնությունը։ Եթե օբյեկտիվ ճշմարտություն գոյություն ունի (ինչպես մատերիալիստներն են կարծում), եթե մարդու «փորձի» մեջ արտացոլելով օբյեկտիվ աշխարհը՝ բնագիտությունն է միայն ընդունակ մեզ տալու օբյեկտիվ ճշմարտություն, ապա անպայման մերժվում է ամեն մի ֆիդեիզմ» (Վ. Ի. Լենին, հատ. 14, էջ 155)։ Այս դրույթը, ասես, հենց այսօրվա համար է գրված։ Առանձնապես մոլեգնում են այդ ուղղությամբ նեոթոմիստները։ Իտալական նեոթոմիստ Ռոբերտ Մագին բնարկելով մատերիայի ֆիզիկական և փիլիսոփայական ըմբռնումները, հետևյալ եզրակացությունն է հանում. «Արդի ֆիզիկան, առանձնա-

պես կվանտային մեխանիկայի շնորհիվ, գիտնականներին, անկախ նրանց դիտակցությունից, մղում է դեպի Արիստոտելի և Թոմա Ակվինացու կլասիկ փիլիսոփայությունը» («Մատերիայի ստրուկտուրան», էջ 135), մարքսիզմի բննադատ, կաթոլիկ փիլիսոփա Ռուստավ Վեատերը ֆալսիֆիկացիայի է ենթարկում դիալեկտիկական մատերիալիզմի հիմնական դրույթները, մասնավորապես բնագիտության փիլիսոփայության մարքսիստական ըմբռնումը, շփոթություն է մտցնում մարքսիզմի կողմից արդեն լուծված հարցերի մեջ և այլն։

«Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմում» Լենինն անխնա քննադատության է ենթարկել մախիստական սոցիոլոգիան, ցուցահեռարար հիմնավորելով պատմական մատերիալիզմի հիմնական դրույթները։ Լենինը քարը քարի վրա չի թողել մարքսիզմի դեմ մախիստների արած առարկություններից ու փաստարկներից, մեկիկ-մեկիկ ցույց տալով դրանց անհիմնությունն ու կեղծիքը։ Դրանք փաստարկներ չէին, այլ մարքսիզմի լիակատար ֆալսիֆիկացիա։ Նրանց սեփական պատմափիլիսոփայական, սոցիոլոգիական հայացքները ոչ այլ ինչ էին, քան հակագիտական, ռեակցիոն այլազան կոնցեպցիաների՝ նեոկանտականության, մայթուսականության, սոցիալ-դարվինիզմի, վոլյունտարիզմի էկլեկտիկական անճոռնի խառնուրդ։ Այդ բոլորը վերջիվերջո հանգում էր պատմության սուբյեկտիվ իդեալիստական և դեհիկ բիոլոգիական ըմբռնմանը։

Թե՛ մեկին և թե՛ մյուսին հակադրվում է միակ ճիշտ պատմափիլիսոփայությունը՝ պատմության մատերիալիստական ըմբռնումը։ Վերջինս դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքների շարունակությունն ու կիրառումն է պատմության նկատմամբ։ Կեցությունն է որոշում գիտակցությունը. սա մարքսիստական փիլիսոփայության հիմնական դրույթն է։ Հասարակական կեցությունն է որոշում հասարակական գիտակցությունը. սա մարքսիստական պատմափիլիսոփայության հիմնական դրույթն է։ Այդ երկու դրույթներն անխզելի են միմյանցից։ Լենինն ամբողջ ուժով ընդգծում է մարքսիստական փիլիսոփայության կուռ ամբողջականությունը։

Բացահայտելով Բոգդանովի վուլգար նատուրալիստական և սուբյեկտիվիստական հայացքների հակամարքսիստական, հակագիտական էությունը, Լենինը հիմնավորում և զարգացնում է այն վճռական դրույթը, որ պատմությունը քաոս կամ պատահականությունների թագավորություն չէ, այլ օրինաչափ պրոցես, այն ունի մարդկանց դիտակցությունից անկախ իր օբյեկտիվ տրամաբանությունը, որն անպատիժ կերպով խախտել չի կարելի։ «Մարդկության ամենաբարձրագույն խնդիրն է—ընդհանուր և հիմնական գծերով ընդգրկել տնտեսական էվոլյուցիայի (հասարակական կեցության էվոլյուցիայի) այդ օբյեկտիվ տրամաբանությունը, որպեսզի ըստ հնարավորության ավելի ճշտորոշ, պարզ ու բննադատաբար հարմարեցնենք դրան մեր հասարակական դիտակցությունն ու բոլոր կապիտալիստական երկրների առաջավոր դասակարգերի գիտակցությունը» (Վ. Ի. Լենին, հատ. 14, էջ 436)։ Կոմունիստական ու բանվորական պարտիաների աշխարհափոխիչ ծրագիրն ու քաղաքականությունը կառուցված են դիտական պատմափիլիսոփայության հենց այդ սկզբունքի համապատասխան։

«Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմը» պարտիականության մարքսիստական սկզբունքի մեծագույն օրինակ է։ Այդ սկզբունքն իր մեջ միացնում է մարքսիզմ-լենինիզմի ամենաերևելի առանձնահատկությունը՝ բարձր դիտա-

կանությունն ու աշխարհափոխիչ ռևոլյուցիոնությունը։ Այն, որպես ուղեցույց սկզբունք՝ թափանցում է ամբողջ դիրքը սկզբից մինչև վերջը, որպես ներքին ենթահիմք՝ ճառագայթում և լուսավորում է բոլոր պրոբլեմները, իդեաները, մտքերը։ Իզուր չէ, որ կոմունիստական աշխարհայացքի բոլոր հակառակորդներն ու թշնամիները սկսած մախիստներից, վերջացրած արդի եզուիտներով չեն հանդուրժում, ուղղակի ատում են պարտիականության մարքսիստական սկզբունքը։ Անգերազանց համոզչությամբ Լենինն ապացուցեց, որ փիլիսոփայությունը պարտիական է սկզբից ևեթ և պարտիական էլ մնում է այսօր. մարտնչող պարտիաներն են՝ իդեալիզմը և մատերիալիզմը։ Մարքսն ու Էնգելսը, բացատրում է Լենինը, մինչև վերջը պարտիականներ էին փիլիսոփայության մեջ, նրանք պաշտպանում ու առաջ էին տանում միայն մեկ գիծ՝ դիալեկտիկական մատերիալիզմի գիծը, խարազանելով ամեն մի շեղում դրանից։

Հետևողականորեն շարունակելով ու զարգացնելով այդ գիծը, Լենինը սովորեցնում է, որ իդեալիստների այլազան ֆրազների հետևը պետք է տեսնել և բացահայտել նրանց դասակարգային, քաղաքական շահը։ Միաժամանակ Լենինը մարքսիստներին առաջադրում է բուրժուական գիտության քննադատական վերամշակման ստեղծագործական սկզբունքը։ Բուրժուական փիլիսոփաները թեոլոգների գործակատարներն են. բայց «մարքսիստների խնդիրն է՝ կարողանալ յուրացնել ու վերամշակել այն նվաճումները, որ արվում են այդ «գործակատարների» կողմից ...կարողանալ կտրել-դեն նետել նրանց ռեակցիոն տենդենցը, կարողանալ մեր գիծը վարել ու պայքարել մեզ թշնամի ուժերի և դասակարգերի ամբողջ գծի դեմ» (Վ. Ի. Լենին, հատ. 14, էջ 460)։ Լենինի աշխատությունը փայլուն կերպով ցույց է տալիս, թե ինչպես պետք է անցկացնել մեր գիծը։

* * *

Ռևոլյուցիոն մարքսիստների սերունդներն են դաստիարակվել լենինյան հանճարեղ աշխատության գաղափարներով և շարունակվում են դաստիարակվել։ Եվ այսօր էլ, կապիտալիստական սիստեմի կործանման և կոմունիզմի ծավալուն շինարարության մեր դարաշրջանում «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմը» հանդիսանում է կոմունիստական ու բանվորական պարտիաների իդեական հզոր զենքը, մարտնչում է մեր շարքերում իմպերիալիստական ռեակցիայի, խավարամոլության, ռևիզիոնիզմի դեմ՝ հանուն մեծ պրոգրեսի. այն որպես հզոր լուսարձակ լուսավորում է կոմունիստական հասարակության կառուցողների փառավոր ուղին։